որդի Վախտանգա, տ[եառ]*ն Խաչինո, տվի զԽնձորիտա կոռ երկիրն ի տունս Մեծարեանց: Տ*[է]*ր Սարգիս եւ մեզ :Ժ: աւր ժամ ի տարում, :Ե:՝ ինձ, :Ե:՝* ամուսնո իմո Արզուխաթունին...»[181]: *Նոյն եկեղեցու սրահի մէջ բացուող մուտքի մօտ՝ անկիւնի 17 տողանոց վիմագրում նշւում է. «Ես՝ Զաքարէ, որդի Վախտանգա, տվի զՋաղացն* Մխիթարա հոգոյն: *:Զ: ժամ տվին: Որ ի Մ*[ա]*ր*[ի]*ամ Նշանէս հանէ՝ :ՅԺԸ: Հայրապետացն նզոված է: Զ*Հասան *յիշեցէ՛ք: Ժամս Մ*[ա]*ր*[ի]*ամ Գիորգա տաւնին առնեն»*[182]: *Բնագրի վերջում յիշուած Հասանն, անշուշտ, Հասան Ջալալն է (իշխած 1214-ից), իսկ սկզբում յիշատակուած Մխիթարն, ըստ ամենայնի՝ իշխանի վաղամեռիկ որդին:*

Ընդսմին, Արագածոտնի Ս. Յովհաննավանքի մի, ցաւօք, չթուագրուած վիմագրից երեւում է, որ վերը նշուած Արզուխաթունը Զաքարէի միակ կինը չի եղել: Վանքի ժամատան ներսի արեւելեան պատին 7 տողով փորագրուած է. «Ողորմութ[իւն]*ամ Ա*[ստուծո]*յ, ես՝ Զաքարիա,* որդի Վաղթանկա, *եղբայր Զալալին, եւ* ամուսին *իմ* Խորիշահ, *դուստր Վասակա, միաբանեցաք սուրբ ուխտիս. եւ գնեցաք զԱշ[տ]արակո Նորքն եւ տվաք ի ս*[ուրբ]*ըքս, եւ սոքա խոստացան :Զ: աւր ժամ...»*[183]: *Իսկ Յովհաննավանքի կաթուղիկէ եկեղեցու արտաքուստ արեւմտեան պատին 8 տողով վիմագիր է պահպանուել միայն Զաքարէի անունից (տողասկիզբները ծածկուած են պատին յենուած մեծ խաչքարի յետեւում). «{...} ես՝ Զաքարիա,* որդի Վախթա/*{նկա, ե}*ղբայր Զալալի՝ *տէր ամեն/{այն Խաչէնո՞, քեռոր}դի* մեծ սպարապետին / *{Իւանէի, միաբանեցա՞} ս*[ուրբ]*ըք ուխտիս վանացս / {Յովհաննու՞, ...}մութե*[ան]* եղբարցս գնե/{ցի ...} եւ ետու ի ս*[ուրբ]*ըք եկեղեցիս, ս/{ոքա խոստացան՞...} աւր ժամ...»*[184]: *Երկրորդ բնագրում «մեծ սպարապետին» արտայայտութիւնն, անկասկած, վերաբերում է նուիրատուի նշանաւոր քեռուն՝ Իւանէ Զաքարեանին, որն իր աւագ եղբայր Զաքարէի մահուանից յետոյ (1213 թ.), ի տարբերութիւն նախորդ տասնամեակների, մինչեւ իր վախճանը (1233-ին) իբրեւ սպարապետ յիշատակւում է արդէն մենակ: Բնագրերից ստացւում է այն տպաւորութիւնը, որ Զաքարէն Խաչէնից Արագածոտն էր գնացել հէնց խնամախօսութեան առիթով: Այդ պատճառով սկզբում (երկրորդ նուիրատուական վիմագրում) նա հանդէս է գալիս միայնակ (բայց իր եւ իր հարազատների բոլոր տիտղոսների թուարկումով), իսկ այնուհետեւ (առաջին նուիրատուական վիմագրում)՝ արդէն նորապսակ կնոջ, ըստ ամենայնի՝ տեղի Վասակ իշխանի դուստր Խորիշահի հետ*[185]: *Վերջում նշենք նաեւ, որ առաւել մեծ հաւանականութեամբ Զաքարէ-Սակռի այս երկրորդ՝ Խորիշահ կնոջն է վերաբերում Զարեգդարում Մեսրոպ Տէր-Մովսիսեանի կողմից ընթերցուած անթուակիր վիմագիրը. «Կամաւն Ա*[ստուծո]*յ, ես՝ Խորիշահ,* ամուսին Զաքարո, *տուի զիմ Աւետարանն Ա*[ստուա]*ծածնիս,*

կիր երկու վիմագրերն էլ տե՛ս էջ 27-28, N 28, 29 («տ[է]ր Ս[ար]գ[իս]»):

181 Նոյն տեղում, էջ 20 (N 29) :

182 Նոյն տեղում, N 28:

183 Տե՛ս **Կ. Ղաֆադարեան**, *Յովհաննավանքը եւ նրա արձանագրութիւնները*, Եր., 1948, էջ 105 (N 55):

184 Նոյն տեղում, էջ 96 (N 37): Որոշ սրբագրումներ ենք կատարել տողատման եւ կէտադրման մէջ (ըստ լուսանկարի ու գրչանկարի) եւ հաւանական վերականգնումներ կատարել պակասող տողասկզբներում:

185 *Խորիշահը* Կիրիլ Թումանովի մօտ (*Manuel de généalogie et de chronologie pour l'histoire de la Caucasie chrétienne*, էջ 238) ներկայացուած է իբրեւ դուստր Վասակ-Սմբատի, այսինքն՝ ըստ հեղինակի՝ Վասակ Նահատակի (Հասան Կրօնաւորեալի՝ 1201-ին զոհուած որդու): Բայց այդ՝ նաեւ այլ առումներով անհաւանական վարկածի համար որեւէ աղբիւրագիտական հիմք մատնացոյց անել հնարաւոր չէ: